Քաղաքացիական գործ թիվ *ԵԴ/3146/02/23*

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

07.02.2023թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Հ. Զարգարյանս (այսուհետ՝ Դատարան), ծանոթանալով «ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայցադիմումին ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 21.03.2022 թվականին կնքված «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑԻ

«ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը 25.01.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 21.03.2022 թվականին կնքված «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը ներկայացվել է 25.01.2023 թվականին, իսկ դատավորի աշխատակազմին տրամադրվել է 02.02.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ *պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:*

2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով»:

Տվյալ դեպքում ներկայացված հայցապահանջով հայցվորը վիճարկում է պատվիրատու պատասխանողի գործողությունները՝ ուղղված «ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 21.03.2022 թվականին կնքված «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով գնման

հայցը ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Դատարանը հարկ է համարում նաև պարզաբանել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 08.02.2022 թվականի թիվ ՀՕ-4-Ն օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, 22-րդ և 23-րդ հոդվածների»:

Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 08.02.2022 թվականի թիվ ՀՕ-7-Ն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների հետ կապած վեճերի քննության հատուկ ընթացակարգ սահմանելու մասին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլուխն ուժի մեջ է մտել պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից, այն է՝ 01.06.2022 թվականից:

Ուստիև Դատարանը հարկ է համարում նշել, որ 25.01.2023 թվականին ներկայացված՝ գնումների հետ կապված վեճերի քննության հատուկ կարգը կիրառելի է սույն քաղաքացական գործի նկատմամբ, և հայցը ենթակա է քննության դրա ներկայացման պահի դրությամբ գործող դատավարական կանոններով, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 21.03.2022 թվականին կնքված «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 13 մարտի 2023 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական էլեկտրոնային կայքի (datalex.am) միջոցով՝ դատական ակտի թղթային հասանելիությունն ապահովելով նույն օրը՝ ժամը 17:00-ից հետո:

Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հայտնման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հ. ՋԱՐԳԱՐՅԱՆ

Պարզաբանվում է, որ Դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ իրավասու է հրավիրել դատական նիստ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում: